Հաշվետվություն

2019 թվականի հոկտեմբերի 6-ից 9-ը Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորություն կատարած գործուղման արդյունքների մասին

1. **Անունը, ազգանունը.**
   Սարհատ Պետրոսյան

2. **Զբաղեցրած պաշտոնը.**
   Կադաստրի կոմիտեի ղեկավար

3. **Գործուղման վայրը և ժամկետները.**
   Միացյալ Թագավորություն, Մանչեստր, 2019 թ. հոկտեմբերի 6-ից 9-ը

4. **Հրավիրող կողմը.**
   «Եվրոգեոգրաֆիքս» կազմակերպություն

5. **Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).**
   Մասնակցություն «Եվրոգեոգրաֆիքս» կազմակերպության գլխավոր համաժողովին

6. **Քննարկված թեմաները.**
   Համաժողովի ընթացքում քննարկվեցին հետևյալ հարցերը.
   - ՄԱԿ-ի կողմից առաջ քաշված ինտեգրված երկրատարածական տեղեկատվության շրջանակի հայեցակարգը և դրա ներդրման հնարավորություններն անդամ երկրներում,
   - ՄԱԿ-ի կայուն զարգացման նպատակներին, նորարարական կադաստրին, բաց տվյալներին վերաբերող հարցեր,
   - Փոփոխվող միջավայրում հավաստիության ապահովում, որը ներառում է Երկրի դիտարկման ոլորտում առաջընթացը, բաց տվյալների քաղաքականությունը,
   - Կայուն զարգացման նպատակներ, բաց տվյալներ, նորարարական կադաստր, բիզնեսի վերափոխում, «Կոպերնիկուս» նախաձեռնություն,
   - «Եվրոգեոգրաֆիքսի» ապագա ռազմավարական ուղղությունները,
   - «Եվրոգեոգրաֆիքսի» 2020 թվականի գործառնական ծրագրի, բյուջեի մասով քննարկումներ և հաստատում,
   - Կառավարման խորհրդի անդամների ընտրություն:

7. **Հանդիպումներ, ելույթներ, բարձրացված կամ քննարկված հարցեր.**
   Համաժողովի ընթացքում Կադաստրի կոմիտեի պատվիրակության կողմից

առաջարկվեց «Եվրոգեոգրաֆիքսի» շրջանակներում ստեղծել «լավագույն փորձերի» կատալոգ, որտեղ անդամ երկրները կներկայացնեն իրենց հաջողված նախագծերը և նորամուծությունները:

Կլոր սեղանի ձևաչափով քննարկվեցին նաև «Եվրոգեոգրաֆիքսի» հետագա գործունեության ուղղություններին վերաբերող հարցեր:

Համաժողովի վերջին օրն անցկացված ընտրությունների արդյունքում ընտրվեցին կազմակերպության կառավարման խորհրդի 3 նոր անդամներ, իսկ կազմակերպության նախագահ Քոլին Բրեյը ևս մեկ տարի ժամկետով վերընտրվեց իր պաշտոնում:

8. **Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.**

Համաժողովի ընթացքում հայկական կողմը փոխգործակցության մի շարք պայմանավորվածություններ ձեռք բերեց գործընկեր երկրների հետ: Մասնավորապես նորվեգական կողմի հետ պայմանավորվածություն ձեռք բերվեց Ինտեգրված կադաստրի համակարգի համար նոր տվյալների կենտրոնի ստեղծման համաֆինանսավորման նպատակով նախագիծ ներկայացնել նորվեգական դրամաշնորհի շրջանակներում, իսկ Կիպրոսի, Ալբանիայի և Ուկրաինայի պատվիրակությունների հետ՝ իրականացնել փորձի փոխանակում և փոխադարձ այցելություններ:

9. **Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.**

Առաջարկվեց շարունակել համագործակցությունը համատեղ ծրագրերի, առաջարկությունների շրջանակներում, մշակել ռազմավարական նոր ուղիներ, աշխատել հավաստի տվյալների տրամադրման, շահագրգիռ կողմերի միջև առավել արդյունավետ հաղորդակցության ապահովման ուղղությամբ:

10. **Ստորագրությունը, ամսաթիվը:**

Սարիսատ Պետրոսյան 11.10.2019 թ.